ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
МУСАЛЕР

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, VILLAGE HALL OF MUSALER

«10» դեկտեմբերի 2012թ
թիվ 183

Հեռ. 0231 6-47-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն՝ հաստատված համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 30-ի N 13-Ն որոշմամբ:

Առդիր 92 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

11076-12
10 12 2012

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

# I. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Բյուջեի ձևավորման, քննարկման, կատարման, վերահսկման հետ կապված գործունեությունը այն հիմնական խնդիրներն են, որոնք որոշում են համայնքի ինքնակառավարման մարմինների ուղղությունն ու վիճակը:*

*Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների արդյունավետ օգտագործումից:*

*2013 թվականի Մուսայելի գյուղական համայնքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են լինելու համայնքի բնակչության կենսապայմանների բարելավմանն ու բարեկեցիկ, հարմարավետ միջավայրի ձևավորմանը:*

*Բյուջեի կազմման ժամանակ համայնքն իր առջև դրել է հետևյալ նպատակները՝*

1. *Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը:*
2. *Նպաստել կարևորագույն հիմնախնդիրների լուծմանը:*
3. *Ապահովել համայքի բնակիչների սոցիալական պաշտպանվածությունը:*

*Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանու անդամներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերել համայնքի 2013 թվականի բյուջեի միջոցների գոյացման և նպատակային ծախսման ուղղությամբ:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ԲԱՑԱՏՐԱԳԻՐ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**
***Մուսայելի գյուղական համայնքի 2013 թվականի***
***բյուջեի***

*Հայաստանի Հանրապետության Մուսայելի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվենկշռվածությունը, հավաստիությունն ու հստակությունը:*

*«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի համաձայն համայնքի 2013 թվականի բյուջեն բաժանված է 2 բաղկացուցիչ մասերից՝*

*Համայնքի բյուջեի վարչական մաս /վարչական բյուջե/ և*

*Համայնքի բյուջեի ֆոնդային մաս /ֆոնդային բյուջե/*

*Բյուջեի այդ բաղկացուցիչ մասերը հավասարակշռված են:*

*Բյուջեի եկամուտների և ծախսերի կանխատեսման և դրանց կազմման աշխատանքները իրականացվում են ինչպես վարչական բյուջեի, այնպես էլ ֆոնդային բյուջեի համար առանձին:*

*Նախատեսված է նաև պահուստային ֆոնդ, որը տարվա ընթացքում ի հայտ եկած չնախատեսված ծախսերի ֆինանսական աղբյուր է:*

*Մուսայելի գյուղական համայնքի բյուջեն կանխատեսվում է*

*Եկամուտների գծով – 46000.0 հազար դրամ,*

*Ծախսերի գծով - 46000.0 հազար դրամ:*

*Հայաստանի Հանրապետության Մուսայելի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն կազմելիս կատարվել են համեմատական վերլուծություններ ՝ 2011թվականի բյուջեի փաստացի արդյունքների, 2012 թվականի հաստատված և 2013թվականի կանխատեսվող ցուցանիշների հետ: Այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.*

*/հազար դրամ/*

| | Եկամուտներ /հազար դրամ/ | Ծախսեր /հազար դրամ/ |
|---|---|---|
| 2011թ. փաստացի | 58297.2 | 42927.3 |
| 2012թ. հաստատված | 54882.4 | 54882.4 |
| 2013թ. կանխատեսվող | 46000.0 | 46000.0 |

## I. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

*Բյուջեում նախատեսված եկամուտները հիմնավորված են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:*

*2013 թվականի բյուջեի եկամուտների կանխատեսման համար հիմք են հանդիսացել նախորդ տարիների մուտքերի կատարման վերլուծությունը:*

*Բյուջեի եկամուտների մասում նախատեսվել են հարկեր և տուրքեր՝ 15348.0 հազար դրամ:*

*Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսվել է 4802.7 հազար դրամ:*

*Համահարթեցման սկզբունքով Մուսալեռի գյուղական համայնքին 2013 թվականի համար հատկացված է 25849.3 հազար դրամի չափով դոտացիա:*

*Ընդամենը նախատեսվում է 2013 թվականի ընթացքում եկամուտ՝ 46000.0 հազար դրամի չափով:*

### ***<u>Նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առանձին եկամտատեսակների վերլուծությամբ</u>***

*Հարկեր և տուրքեր*

*Հարկային եկամուտները և տուրքերը 2013թվականի համար նախագծով ծրագրվել են 15348.0 հազար դրամ:*

*ա) Հարկային եկամուտները ծրագրվել են 14800.0 հազար դրամ:*

*գույքահարկը 2013 թվականի համար կանխատեսվել է 8 800.0 հազար դրամ:*

*հողի հարկը 2013 թվականի համար կանխատեսվել է 6000.0 հազար դրամ:*

*2013 թվականի բյուջեում հողի հարկի և գույքահարկի գծով մուտքերի կանխատեսման ժամանակ գնահատվել է այդ հարկերի գծով 2013 թվականի հաշվարկային գումարների ծավալները, գնահատվել է գույքահարկի և հողի հարկի գծով համայնքի բյուջեի եկամուտների պոտենցիալ մակարդակը: Կանխատեսումների համար հաշվի է առնվել նաև նախորդ տարիների այդ հարկերի գանձելիության մակարդակը:*

*բ) Տեղական տուրքերը ծրագրվել են 548.0 հազար դրամ, որից*

- *Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը կանխատեսվել է 75.0 հազար դրամ:*
- *Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը նախատեսվել է 5.0 հազար դրամ:*
- *1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ կանխատեսվել է 52.0 հազար դրամ:*

  *2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ կանխատեսվել է 78.0 հազար դրամ:* .
- *Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը կանխատեսվել է 300.0 հազար դրամ:*
- *Համայնքի տարածքում գովազդի տեղադրման համար տեղական տուրքը կանխատեսվել է 37.0 հազար դրամ:*
- *Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը կանխատեսվել է 1.0 հազար դրամ:*

*2. Տեղական վճար ծրագրվել է 2021.0 հազար դրամ, որից*

- *Մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ տեղական վճար կանխատեսվել է 6.0 հազար դրամ:*
- *Ավարտական շինարարության փաստագրման վճար է կանխատեսվել 15.0 հազար դրամ*

*Համայնքի կողմից 2013 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճար է նախատեսվել սահմանվել.*

*Մանկապարտեզում երեխաների պահպանման համար ծնողական վճար է նախատեսվել՝ 2000.0 հազար դրամ:*

*Աղբահանության վճար է նախատեսվել 2000.0 հազար դրամ:*

Տեղական տուրքերի և վճարների գծով համայնքի բյուջեի եկամուտների հաշվարկման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2013 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» N 8-Ն որոշումը:

Նախատեսվել է համայնքի տարածքում գտնվող հողի վարձակալական վճարի գծով եկամուտներ 631.7 հազար դրամ: Հողի վարձակալական վճարի գծով եկամուտի կանխատեսման համար հաշվի է առնվել նաև նախորդ տարիների գանձելիության մակարդակը:

Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար նախատեսվել է 150.0 հազար դրամ:

Աղյուսակ N1-ում ներկայացված է 2011 թվականի փաստացի, 2012 թվականի հաստատված և 2013 թվականի նախատեսված եկամուտները վարչական և ֆոնդային բյուջեներում՝

Աղյուսակ N1 /հազար դրամ/

| N | Եկամուտների անվանումը | 2011թ. փաստացի. | 2012թ. հաստ. | 2013թ. փաստացի |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 4865.3 | 6100.0 | 6000.0 |
| 2 | Գույքահարկ՝ այդ թվում | 6918.0 | 8800.0 | 8800.0 |
| | Գույքահարկ շենքերի շինությունների | 2132.3 | 3000.0 | 3000.0 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների | 4785.7 | 5800.0 | 5800.0 |
| 3 | Վարձակալությամբ տրված հողի հարկ | 270.9 | 504.5 | 631.7 |
| 4 | Տեղական տուրքեր և վճարներ | 1160.0 | 759.0 | 4719.0 |
| 5 | Դոտացիա (պետ. բյուջեից ստացված միջոցներ) | 22041.2 | 23348.8 | 25849.3 |
| Ընդամենը | | 35255.4 | 39512.3 | 46000.0 |

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ N2-ում ներկայացված է վարչական և ֆոնդային բյուջեների ծախսերը ըստ գործառական դասակարգման 2011 թվականի փաստացին, 2012թվականի հաստատվածը և 2013 թվականի նախատեսվածը:

Աղյուսակ N2 — /հազար դրամ/

| | | 2011թ. Փաստացի | 2012թ. հաստատված | 2013թ. նախատեսված |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղապետարան | 21936.4 | 19611.6 | 21680.0 |
| 2 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն /Այլ դասերին չպատկանող/ | 2227.1 | 2893.2 | 5083.0 |
| 3 | Այլ սոցիալական ծրագրեր | 3250.0 | 2690.0 | 2000.0 |
| 4 | Այլ մշակութային կազմակերպություններ (Երիտասարդական, սպորտային ծրագրեր) | 1131.5 | 1264.0 | 840.0 |
| 5 | Աղբահանում | 2258.4 | 2250.3 | 3000.0 |
| 6 | Նախագծային ծախսեր | 490.0 | 350.0 | - |
| 7 | Այլ հիմնական միջոցներ | 105.0 | - | - |
| 8 | նախադպրոցական կրթություն | 3180.0 | 10303.2 | 12397.0 |
| 9 | Շենքերի շինությունների կառուցում | 963.0 | 4310.0 | - |
| 10 | Վարչական սարքավորում | 2542.0 | 2800.0 | - |
| 11 | Շենքերի, շինությունների կապիտալ վերանորոգում | 4843.8 | 8275.1 | - |
| 12 | Տնտեսական հարաբերություններ /օտարում/ | -223.4 | -365.0 | - |
| 13 | Պահուստային ֆոնդ | - | 500.0 | 1000.0 |
| Ընդամենը | | 42703.8 | 54882.4 | 46000.0 |

Աղյուսակ N3-ում ներկայացված է վարչական և ֆոնդային բյուջեների ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ 2011 թվականի փաստացին, 2012թվականի հաստատվածը և 2013 թվականի նախատեսվածը:

Աղյուսակ N3

/հազար դրամ/

| հ/հ | ԾԱԽՍԵՐ | 2011թ. (հազ. դրամ) Փաստ. | 2012թ. (հազ. դրամ) Հաստ. | 2013թ. (հազ. դրամ) Նախ. |
|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 16377.8 | 16030.0 | 18790.0 |
| 2 | Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ | 1140.0 | - | 400.0 |
| 3 | Աշխատավարձի վրադիր (սոց. վճար) | 2957.9 | 3335.0 | - |
| 4 | Գործուղում | 229.0 | 250.0 | 250.0 |
| 5 | Էներգետիկ ծառայություն | 2109.8 | 2670.0 | 2830.0 |
| 6 | Կապի ծառայություն | 300.0 | 400.0 | 360.0 |
| 7 | Աղբահանում (կոմունալ ծառայություն) | 1138.3 | 1093.3 | 3200.0 |
| 8 | Այլ նպաստներ բյուջեից (սոց. օգնություն) | 3250.0 | 2690.0 | 2000.0 |
| 9 | Այլ մշակութային կազմակերպություններ (Երիտասարդական ծրագրեր) | 120.0 | 200.0 | 300.0 |
| 10 | Մասն. զարգացման, համակարգչային տեղեկատվական և ընդհանուր բնույթի ծախսեր | 469.5 | 501.6 | 700.0 |
| 11 | Վարչական սարքավորումների ծախսեր | 2542.0 | 2800.0 | - |
| 12 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր, տրանսպորտային նյութեր | 384.4 | 341.8 | 760.0 |
| 13 | Գրասենյակային և այլ նյութեր | 220.0 | 250.0 | 250.0 |
| 14 | Ներկայացուցչական ծախսեր | 260.0 | 370.0 | 600.0 |
| 15 | Շենքերի, կառույցների մեքենաների, սարքավորումների և ընթացիկ նորոգում և պահպանում | 1589.6 | 550.0 | 1055.0 |
| 16 | Շենքերի և շինությունների կառուցում | 963.0 | 4310.0 | - |
| 17 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 4843.8 | 8275.1 | - |
| 18 | Նախագծահետազոտական ծախսեր | 490.0 | 350.0 | - |
| 19 | Պահուստային ֆոնդ | - | 500.0 | 1000.0 |
| 20 | Աճեցված ակտիվներ | 105.0 | - | - |
| 21 | Գրքեր | - | - | - |
| 22 | Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից, օտարում | -223.4 | -365 | - |
| 23 | Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր | - | - | - |
| 24 | Սուբսիդիաներ ոչ ֆինանս. պետ. (համայնք) կազմակերպ. | 3180.0 | 10303.2 | 12397.0 |
| 24 | Այլ ծախսեր (ապահովագրական հատուկ նպատակ, գույքի վարձ. անդամավճար) | 257.2 | 27.4 | 1108.0 |
| | Ընդամենը | 42703.9 | 54882.4 | 46000.0 |

*Աղյուսակ N4-ում ներկայացված է*
*Համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)*

*Աղյուսակ N4*

| | 2011թ. (հազ. դրամ) Փաստ. | 2012թ. (հազ. դրամ) Հաստ. | 2013թ. (հազ. դրամ) Նախ. |
|---|---|---|---|
| Ընդամենը հավելուրդը կամ դեֆիցիտը | 7448.4 | -15370.1 | 0 |

*Աղյուսակ N5 -ում ներկայացված է համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները*

*Աղյուսակ N5*

| | 2011թ. (հազ. դրամ) Փաստ. | 2012թ. (հազ. դրամ) Հաստ. | 2013թ. (հազ. դրամ) Նախ. |
|---|---|---|---|
| Առանց վարչական մասի միջոցների ֆոնդային մաս մուտքագրված գումար | -7448.4 | 14098.2 | 0 |
| վարչական մասի միջոցների ֆոնդային մաս մուտքագրված գումար | - | 1271.9 | 0 |
| Ընդամենը | -7448.4 | 15370.1 | 0 |

*Աղյուսակ N6-ում ներկայացված է 2012-2013 թվականների Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:*

*Աղյուսակ N7-ում ներկայացված է 2012-2013 թվականների Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի մանկապարտեզի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:*

Աղյուսակ N 6 (հազար դրամ)

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Պաշտոնային դրույքաչափերը | |
|---|---|---|---|
| | | 2012թ. | 2013 |
| 1 | Համայնքի ղեկավար | 180000 | 208500 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 106000 | 127000 |
| 3 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1) | 115000 | 140000 |
| 4 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-1) | 95000 | 115000 |
| 5 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2) | 95000 | 115000 |
| 6 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-3) | 95000 | 115000 |
| 7 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-4) | 95000 | 115000 |
| 8 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-5) | 95000 | 115000 |
| 9 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի I կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1) | 90000 | 108500 |
| 10 | Հավաքարար | 35000 | 45000 |
| 11 | Պահակ | 33000 | 43000 |
| Ընդամենը | | 1034000 | 1247000 |

Աղյուսակ N 7 (հազար դրամ)

| հ/հ | Պաշտոնի անվանումը | հ/մ | Պաշտոնային դրույքաչափերը | |
|---|---|---|---|---|
| 1 | Մանկապարտեզի վարիչ | 1 | 70000 | 85500 |
| 2 | Հաշվապահ | 1 | 40000 | 50500 |
| 3 | Դաստիարակ | 2 | 65000 | 79400 |
| 4 | Երաժշտության դաստիարակ | 0.5 | 66000 | 80500 |
| 5 | Խոհարար | 1 | 35000 | 45000 |
| 6 | Դաստիարակի օգնական | 2 | 55000 | 68000 |
| 7 | Հավաքարար | 1 | 35000 | 45000 |
| 8 | Դռնապան | 1 | 33000 | 43000 |
| 9 | Տնտեսվար | 1 | 35000 | 45000 |
| Ընդամենը | | | 521 000 | 649 000 |

Բյուջեի ծախսերի կանխատեսման հիմքում ընկած են նաև այն աշխատանքների համար պահանջվող ծախսերը, որոնք նախատեսվում է իրականացնել 2013թվականին:

*__2013թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.__*

*Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում*

1. Համայնքի փողոցների և ճանապարհների բարեկարգում և կանաչապատում,
2. խմելու ջրի ջրագծերի վերանորոգում և կառուցում,
3. գիշերային լուսավորության անցկացում,

*Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում*

1. Տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպում,
2. աջակցություն երիտասարդության դերի բարձրացմանը,
3. հուշարձանի վերանորոգում և պահպանում:

*Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում*

1. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումների կիրառում,
2. սպորտային հրապարակի պահպանմանն ուղղված աշխատանքների իրականացում:

*Սոցիալական ծառայության բնագավառում*

1. Սոցիալապես անապահով ընտանիքներին, հաշմանդամներին կորցրած բնակիչների, բուժման անհրաժեշտություն ունեցող բնակիչներին սոցիալական աջակցություն:

*Գյուղատնտեսության բնագավառում*

1. Համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքների կազմակերպում,
2. Գյուղատնտեսության և անասնապահության զարգացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում:
3. Աջակցություն գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը. գյուղգործիքների ձեռք բերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2012թ. ԹԻՎ 13-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն՝
   եկամտային մասով 46 000.0 հազար (քառասունվեց միլիոն) դրամ,
   ծախսային մասով 46 000.0 հազար (քառասունվեց միլիոն) դրամ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2013թվականի բյուջեի եկամուտները՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն հավելված 2-ի:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի:
5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2013թվականի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը) համաձայն հավելված 4-ի:
6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված 5-ի:
7. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական 2013 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 6-ի:
8. Հաստատել բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համաձայն հավելված N2-ի:

9. 2013 թվականի ըստ եռամսյակների չծախսված գումարները թույլատրել օգտագործել ըստ հաջորդականության:
10. Համաձայնություն տալ Մուսալեռի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեում չնախատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորում իրականացնելու:
11. Համաձայնություն տալ Մուսալեռի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելու:
12. Մուսալեռի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու համար սահմանել 50% չափաքանակ:
13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Գ. Իսպիրյան | /ստ./ | /ստ./ | |
| Ն. Գրիգորյան | /ստ./ | /ստ./ | |
| Ք. Հակոբյան | /ստ./ | /ստ./ | |
| Խ. Մկրտումյան | /ստ./ | /ստ./ | |
| Հ. Սամվելյան | /ստ./ | /ստ./ | |
| Ա. Սարգսյան | /ստ./ | /ստ./ | |
| Հ. Միքայելյան | /ստ./ | /ստ./ | |
| Ա. Ֆարֆարյան | /ստ./ | /ստ./ | |
| Ռ. Թամազյան | /ստ./ | /ստ./ | |

Համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան

2012թվական, նոյեմբերի 30

գ. Մուսալեռ

# Տ ե ղ ե կ ու թ յ ու ն ն ե ր

## գույքահարկի և հողի հարկի, հողերի և այլ գույքի վարձակալության վարձավճարների գծով առանձին ցուցանիշների վերաբերյալ

(հազար դրամով)

| Տողի NN | Եկամտատեսակները | ապառքը տարեսկզբի դրությամբ | ապառքը տարեվերջի դրությամբ | տվյալ տարվա հաշվարկային գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 4387.0 | 6682.7 | 2960.2 |
| 2 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար | 12837.2 | 17050.6 | 5919.8 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 2101.2 | 5080.5 | 5602 |
| 4 | Հողերի վարձակալության վարձավճարներ | 359.3 | 497.8 | X |
| 5 | Այլ գույքի վարձակալության վարձավճարներ | - | - | X |

Մուսալեռ համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան

Առաջատար մասնագետ Դ. Խաչատրյան